



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 33/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 06.04.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-33/16 բողոք), ի լրումն բողոքի 22.04.2016թ. ներկայացված գրությունը և կից փաստաթղթերը, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի 19.04.2016թ. թիվ Ե2016-542 և կից փաստաթղթերը, «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-33/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 21.04.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 21.03.2016թ. ժամը 15:00-ին մասնակցել է «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցած ընկերություններից ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է Ընկերությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.03.2016թ. թիվ 2 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների մասին 21.03.2016թ. դրությամբ տրամադրված եզրակացության՝ Ընկերությունն ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն և արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախնական որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սիլեր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ մասնակցելով Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգին, 21.03.2016թ. ժամը 15:00-ի՝ հայտը ներկայացնելու դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընկերությունը նաև նշել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածի 2-րդ հոդվածում սահմանված «ապառք» բառի հասկացությունից երևում է, որ ապառքը հաշվետու ժամանակաշրջանում տվյալ տեսակի գծով հարկային պարտավորությունն է, որը ժամկետանց հարկային պարտավորություն չի համարվում: Ավելին, ապառքը հաշվետու ժամանակաշրջանի տվյալ հարկատեսակի գծով հարկային պարտավորությունն է, որի մարումը նախատեսվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Ավելին, համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-ր հոդվածի՝ նույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Ըստ Ընկերության՝ ստացվում է հետևյալ պատկերը, որ եկամտային հարկի մասով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-

ը, որի ընթացքում հարկատուն կատարում է հարկային պարտավորությունը: Այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համարվում է ոչ աշխատանքային օր, ապա վերջին օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը, որի վերաբերյալ կան հիմնավորումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում:

Իրավական ակտերով սահմանված ժամկետների որոշումը կարգավորված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով, համաձայն որի՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Ինչ վերաբերվում է այն դեպքերին, երբ ժամկետի վերջին օրը ավարտվում է ոչ աշխատանքային օրով, ապա դրա վերաբերյալ համապատասխան կարգավորում է նախատեսված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածով, համաձայն որի՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը թվարկված փաստերի և իրավակարգավորումների համադրումից ստացվում է հետևյալ պատկերը, որ հարկային պարտավորությունների կատարման օրը սահմանված է յուրաքանչյուր ամսվա քսանը, բայց, քանի որ մարտի քսանը կիրակի օր է՝ ոչ աշխատանքային օր, ապա ժամկետի ավարտի օր է համարվում 21.03.2016թ.:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Այսինքն, եթե հարկ վճարողը 22.03.2016թ. հետո է կատարում իր հարկային պարտավորությունը, ապա իր հարկային պարտավորությունը համարվում է կետանցված,

որի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է տույժ:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 2-րդ հոդվածի վերջին պարբերության՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերում հակասության, երկիմաստության կամ տարընթերցման դեպքում դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով հարկ վճարողը կարող է նաև սահմանված կարգով դիմել հարկային, մաքսային, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009թ. մայիսի 29-ի թիվ 1197-Ա հրամանով սահմանվել է տեղեկանք տրամադրվելու ձևը համաձայն Ձև 2-ի, որտեղ նախատեսված է թվով 6 սյունակներ, որոնցից առաջինում նշված է «ՀԱՐԿԱՏԵՍԱԿ», երկրորդում՝ «ԱՊԱՌՔ» երրորդում՝ «ՏՈՒՅԺ», չորրորդում՝ «ՏՈՒԳԱՆՔ», հինգերորդում՝ «ԸՆԴԱՄԵՆԸ», վեցերորդում՝ «ԴԵԲԵՏԱՅԻՆ ՄՆԱՅՈՐԴ» անվանումներով սյունակներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 21.03.2016թ. տրված 1089 տեղեկանքի երրորդ սյունակում չկա որևէ թիվ նշված, տեղեկանքի երկրորդ սյունակում «ԱՊԱՌՔ» բառը բաց է թողնված, երրորդ սյունակում նշված ժամանակին մուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով հաշվարկված տույժի գումարը, որի պատճառով հանձնաժողովը հասկացել է, որ երկրորդ սյունակում նշված թվերը ժամկետանց պարտավորություններ են, ինչի համար էլ Ընկերությունը զրկվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու հնարավորությունից:

Ավելին, 22.03.2016թ. տրված թիվ 1088 տեղեկանքի երկրորդ, երրորդ և չորրորդ սյունակներում չկան որևէ նշված թվեր:

Տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.03.2016թ. դրությամբ տրամադրված եզրակացության, հարկային մարմնի կողմից «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 25.03.2016թ. դիմումի համաձայն՝ 29.03.2016թ. տրամադրված սխալ կամ թերի տեղեկատվության արդյունքում առաջացել է այսպիսի թյուրիմացություն, որի հետևանքով Ընկերությունը զրկվել է հաղթող ճանաչվելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը 01.04.2016թ. դիմում է ներկայացրել հարկային տեսչություն 29.03.2016թ. տրված թիվ 1089 տեղեկանքի վերաբերյալ ստորև երկու հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար.

1. Արդյոք 29.03.2016թ. տրված թիվ 1089 տեղեկանքի «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:
2. Արդյոք տեսչությունը իրավունք ունի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 1197-Ա հրամանով սահմանված տեղականքի Ձև 2 ձևից տարբերվող ձևով տեղեկանք տրամադրելու:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Տվյալ դեպքում անգործության ժամկետը լրանում է 07.04.2016թ., որի ընթացքում և ներկայացնվում է բողոքը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ հանձնաժողովը որոշում է կայացրել տրամադրված սխալ տեղեկատվության արդյունքում, ուստի պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված բողոքը

ներկայացնելու կարգը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. դադարեցնել 21.03.2016 թվականի «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշումը.

2. «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին ճանաչել «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգով հաղթող.

3. կասեցնել «Սիլեր» ՍՊԸ-ի և Պատվիրատուի միջև պայմանագրի կնքման ուղղված գործողությունը, մինչև սույն բողոքում նշված հարցերի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից պարզաբանում ստանալու ժամանակահատվածը, որը ԳԲԽ-33/16 բողոքը քննող հանձնաժողովի 11.04.2016թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

Ընկերությունը, ի լրումն 06.04.2016թ. բողոքի 22.04.2016թ. ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 15.04.2016թ. տրվել է պարզաբանում 21.03.2016թ. դրությամբ տրված թիվ 1089 տեղեկանքի վերաբերյալ, որտեղ տեղ են գտել իրար հակասող պատասխաններ, այսինքն.

1. «Ի պատասխան Ձեր 02.04.2016թ. Մաշտոցի ՀՏ ներկայացված դիմումով ներկայացված առաջին հարցի, հայտնում եմ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01845395) 21.03.2016թ. դրությամբ եկամտային հարկի գծով ունի 877 474 դրամ սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորություն:»,

ՀՀ Օրենսդրությամբ /կամ Հարկային օրենսդրությամբ/ սահմանված չեն նման տարաբնույթ «սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորություն» մեկնաբանություններ, տերմիններ կամ սահմանումներ: Ստացվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությունը միտումնավոր չի ցանկացել հստակ պատասխանել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից պահանջված հարցադրումներին:

2. «Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ հաշվակված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների

մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, ինչպես նաև հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածը՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը, եկամտային հարկի վճարման վերջնաժամկետ էր 21.03.2016թ., սակայն Ձեր կողմից այն կատարվել է 22.03.2016թ.-ին, որի հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկվել է տույժ 1316 դրամ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով ($877474 \times 0.15\% \times 1$ օր)»:

Վերը նշվածով ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությունը ապացուցում է, որ հայտը ներկայացնելու ժամանակ 21.03.2016թ. ժամը 15:00-ի դրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.04.2016թ. կրկին դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությանը հուզող հարցերի վերաբերյալ հստակ պատասխան տալու համար:

Հաշվի առնելով վերը ներկայացված հանգամանքերը և փաստերը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Սիլեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը և որոշում կայացնել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրենը, մասնակցելով 11.04.2016թ. ժամը 16:50-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-33/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն Կենտրոնին ուղղված 19.04.2016թ. թիվ Ե2016-542 գրությամբ ներկայացրել է «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. մասնակցել է Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգին:

Ընթացակարգի մասնակիցներից նվազագույն գնային առաջարկը ներկայացվել է Ընկերության կողմից: Սակայն, Ընթացակարգի հրավերի I մասի 7.5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կատարված հարցմանն ի պատասխան՝ ստացված բացասական եզրակացության հիման վրա՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2 որոշմամբ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սիլեր» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Պատվիրատուի ներկայացուցիչները, մասնակցելով ԳԲԽ-33/16 բողոքը քննող հանձնաժողովի 11.04.2016թ. ժամը 16:50-ի նիստին, հայտնել են, որ համաձայն կլինեն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ցանկացած որոշման հետ:

3. ԳԲԽ-33/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 21.04.2016թ. եզրակացությունը և առաջարկել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 06.04.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-33/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-33/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար պահանջարկային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով 21.03.2016թ. հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2016թ. ժամը 15:00-ի թիվ 2 արձանագրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 21.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 24.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 877 474 ՀՀ դրամի չափով:**

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.03.2016թ. ժամը 15:00-ի թիվ 2 արձանագրության 1.3 կետով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

8. Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 29.03.2016թ. թիվ 1089 տեղեկանքի՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. դրությամբ ունեցել է 877 474 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

9. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 01.04.2016թ. դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչություն խնդրելով պարզաբանել, թե արդյոք 29.03.2016թ. տրված թիվ 1089 տեղեկանքով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն և արդյոք տեսչությունը իրավունք ունի տրամադրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009թ. մայիսի 29-ի թիվ 1197-Ա հրամանով սահմանված տեղեկանքի Ձև 2-ից տարբերվող ձևի տեղեկանք:

10. Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ դիմումի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությունը 15.04.2016թ. թիվ 1243 գրությամբ Ընկերության կողմից ներկայացված դիմումի առաջին հարցի վերաբերյալ հայտնել է, որ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01845395) 21.03.2016թ. դրությամբ եկամտային հարկի գծով ունի 877 474 դրամ **սահմանված ժամկետում չկատարված** հարկային պարտավորություն: Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, ինչպես նաև հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածը, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը, եկամտային հարկի վճարման վերջնաժամկետն էր 21.03.2016թ., սակայն Ընկերության կողմից այն կատարվել է 22.03.2016թ.-ին, որի հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկվել է տույժ 1316 դրամ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով ($877\ 474 \times 0,15 \times 1$ օր):

Ի պատասխան Ընկերության դիմումով նշված երկրորդ հարցի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությունը հայտնել է, որ տեսչության կողմից տրամադրվել է եզրակացություն՝ կազմված ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 06.04.2016թ. ներկայացրած բողոքը, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի 19.04.2016թ. թիվ Ե2016-542 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.04.2016թ. տրված եզրակացությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության 29.03.2016թ. թիվ 1089 տեղեկանքը և 15.04.2016թ. թիվ 1243 գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար պահանջարկային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով **21.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 21.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա՝ 21.03.2016թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 877 474 ՀՀ դրամի չափով** ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2016թ. ժամը 15:00-ի թիվ 2 արձանագրության 1.3 կետով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 29.03.2016թ. տրված թիվ 1089 տեղեկանքի համաձայն՝ **«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. դրությամբ ունեցել է 877 474 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:**

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 01.04.2016թ. դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչություն, խնդրելով պարզաբանել, թե արդյոք 29.03.2016թ. տրված թիվ 1089 տեղեկանքով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 21.03.2016թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն և արդյոք տեսչությունը իրավունք ունի տրամադրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009թ. մայիսի 29-ի թիվ 1197-Ա հրամանով սահմանված տեղեկանքի ՁԵՎ 2 ձևից տարբերվող ձևի տեղեկանք:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ մաշտոցի հարկային տեսչությունը 15.04.2016թ. թիվ 1243 գրությամբ հայտնել է, որ ի պատասխան Ընկերության կողմից ներկայացված դիմումի առաջին հարցի՝ **«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01845395) 21.03.2016թ. դրությամբ եկամտային հարկի գծով ունի 877 474 դրամ սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորություն:** Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, քան հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածը, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը, եկամտային հարկի վճարման վերջնաժամկետն էր 21.03.2016թ., սակայն Ընկերության կողմից այն կատարվել է 22.03.2016թ.-ին, որի հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկվել է տույժ 1316 դրամ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով (877 474×0.15×1 օր):

Ի պատասխան դիմողի երկրորդ հարցի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչությունը հայտնել է, որ տեսչության կողմից տրամադրվել է եզրակացություն կազմված ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների**, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ եթե ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված **եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է:**

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության, Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա՝ 21.03.2016թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 877 474 ՀՀ դրամի չափով, ինչը հաստատվել է նաև ԳԲԽ-33/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացված ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից Ընկերությանն ուղղված 15.04.2016թ. թիվ 1243 գրությամբ:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների հարցման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի **Ընկերության ներկայացրած՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող:**

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 06.04.2016թ. բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 06.04.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝



Գրիգորյան Էդվարդ



Նիկոլայան Նարինե